Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***18.12.2019թ. ժամը 11.00***

Նախագահում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 55-ը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Անուշավան Ղազարյանը և օգնականներ Նարեկ Մանուկյանն ու Լիաննա Հովհաննիսյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչությունների պետերն ու բաժինների վարիչները, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի իրավապահ մարմինների, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի, մարզային կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Օրակարգում՝

1. 2019 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2019 թվականին իրականացված սուբվենցիոն ծրագրերի փաստացի կատարված ֆինանսավորումների և դրանց կատարման ընթացքի մասին:

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ

հարակից զեկուցող Արմեն Զոհրաբյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2019 թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ը անցկացված զորահավաքի արդյունքների և ձմեռային զորակոչի ընթացքի մասին:

/Զեկ. Տիգրան Հակոբյան - մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ/

4. Այլ հարցեր:

Ելույթ ունեցան՝

Արման Ղազարյանը - Զոլաքար համայնքի ղեկավար
Հովհանես Հովեյանը - Վարդենիկ համայնքի ղեկավար
Կորյուն Մարգարյանը - Լճաշեն համայնքի ղեկավար

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2019 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մինչև տարեվերջ մարելու համար.

2) համայնքային բյուջեներում կատարվող փոփոխությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան.

3) մարզի համայնքներում սուբվենցիոն ծրագրերով իրականացված աշխատանքները ֆինանսավորելու համար մինչև 2019 թվականի դեկտեմբերի 24-ը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել համապատասխան փաստաթղթերը.

4) պլանավորել 2020 թվականին համայնքներում սուբվենցիոն ծրագրերով նախատեսվող աշխատանքները, օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան նախապատրաստել դրանց հայտերը և մինչև 2020 թվականի հանվարի վերջ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան.

5) ապահովել համայնքների վարչական սահմաններում գտնվող վարձակալությամբ տրամադրված գյուղատնտեսության նշանակության հողերի վարձավճարների գծով ապառքների հավաքագրումը՝ վարձակալների կողմից հրաժարվելու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել վարձակալական պայմանագրերը և գանձել ապառքները.

6) ձեռնարկել միջոցներ թույլ չտալու համայնքների վարչական սահմաններում ապօրինի շինարարությունների իրականացումը.

7) 2020 թվականին իրականացվելիք միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգման արդյունքում ֆրեզվող ասֆալտ-բետոնյա խառնուրդը ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման նպատակով օգտագործելու համար նախօրոք առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան.

8) ուշադրության կենտրոնում պահել համայնքներում գործող մանկապարտեզների ջեռուցման գործընթացը և հետևողական լինել այդ շենքերում պահանջվող ջերմաստիճանը ապահովելու համար.

9) հնարավորության սահմաններում աջակցել համայնքների հանրակրթական դպրոցներին՝ անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար.

10) հնարավորության սահմաններում աջակցել մարզի տարածքում տեղակայված զորամասերին:

Недействительная подпись

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069
ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ